**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Արազափ, Հայկավան, Մրգաշատ բնակավայրերի փողոցների ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-25/101 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի դեկտեմբերի 3-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-25/101 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի մայիսի 27-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** Մեծամորի համայնքապետարանի և <<Ուրբան դեվելոփմենթ>> ՍՊԸ և <<ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ կոնսորցիումի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2026 թվականի մայիսի 27-ին կատարված փոփոխությունների արդյունքում Պայմանագրի Հավելված 3-ով ներկայացված «Վճարման ժամանակացույց»-ը՝ փոփոխվել և հաստատվել է նոր խմբագրությամբ, համաձայն՝ համաձայնագիր 4-ի Հավելված 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2025 թվականի դեկտեմբերի 03-ին կնքված ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-25/101 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ Մեծամորի համայնքապետարանի կողմից ծառայության մատուցման ձեռքբերման պահանջը չի դադարել և ծառայության մատուցման ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 8.5 և 8.16 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**